ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 98 (16186) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՏԵՔՍՏԸ

Եվրամիության պաշտոնական կայքէջում հրապարակվեց Վրաստանի Եվրամիության եւ Վրաստանի միջեւ ասոցիացման համաձայնագրի նախաստորագրված տեքստը:

Փաստաթղթի առաջաբանում նշված է, որ Եվրամիությունը պատրաստ է Վրաստանին աջակցել ժողովրդավարական գործընթացների ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության եւ օրենքի գերակայության հաստատման գործում, նաեւ՝ Վրաստանի քաղաքացիների համար ապահովել քաղաքական եւ տնտեսական նպաստավոր պայմաններ:

Եվրամիությունը պատրաստակամություն է հայտնում նաեւ Վրաստանին լիարժեք աջակցություն ցուցաբերել քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ ինստիտուցիոնալական զարգացման տեսանկյունից: Փաստաթղթում ընդգծված է նաեւ Եվրոպային Վրաստանի պատմական նպատակաուղղվածությունը:

Փաստաթուղթը բաղկացած է 1000 էջից:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՎՐՈՊԱՅԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԿԱՊԱՀՈՎԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»

«Եվրոնյուսին» տված հարցազրույցում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ «Եվրոպայի ընդլայնումը է՛լ ավելի անվտանգ կդարձնի աշխարհը, ավելի շատ անվտանգություն կլինի տարածաշրջանում եւ առավել անվտանգ կլինի ռուս հարեւանը»:

Վրաստանը Եվրոպայի պատմական հատվածն է, այնպես որ, մենք շարունակում ենք ընթացքը այլ ճանապարհով: Հուսով եմ՝ կգա մի պահ, մոտ ժամանակներում մենք իրականում կներծուլվենք այդ ընտանիքին: Ոչ միայն մշակութային, այլեւ քաղաքական իմաստով: Մենք գտնում ենք, որ եվրոպական ձեւաչափը նախատեսում է հաղթանակ բոլոր կողմերի համար: Եվրոպական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱՏՕ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

Russia Today հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի անդամակցության միտումը սպառնալիք չի ստեղծում Ռուսաստանի համար:

«Մենք պետք է Ռուսաստանին համոզենք, որ Վրաստանը ոչ մի սպառնալիք չի ներկայացնում»,- ասաց նա:

Վրաստանի վարչապետը հիշեցրեց, որ երկրի արտաքին քաղաքական առաջնահերթությունները մնում են անփոփոխ: «Մենք հստակորեն հայտարարում ենք, որ մեր արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը հանդիսանում է եվրաինտեգրումը եւ ՆԱՏՕ-ին անդամակցումը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԵՏԲՅՈՒՋԵ

ԿՐՃԱՏՎՈՒՄ Է ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Վրաստանի խորհրդարանի հաստատմանը ներկայացվեց երկրի 2014 թվականի պետական բյուջեի վերջնական նախագիծը: Պետբյուջեի ճշգրտված նախագծում մի քանի միլիոնով կրճատվել է աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության եւ գյուղատնտեսության նախարարությունների ֆինանսավորումը, թեպետ դրանք մնում են առաջնահերթային ուղղությունների թվում:

Մասնավորապես, նախագծում, որը հաստատման համար ներկայացվել է խորհրդարան, առողջապահության նախարարությանը հաջորդ տարի կտրվի 2 658,0 միլիոն լարի, ինչը 313 միլիոնով ավելի է, քան ընթացիկ տարվանը, թեպետ պետբյուջեի նախագծի սկզբնական տարբերակում առողջապահության համար նախատեսված էր առանձնացնել 2 700,0 միլիոն լարի: 42 միլիոն լարիով առողջապահության նախարարության ֆինանսական կրճատումը ֆինանսների նախարարությունը բացատրում է համընդհանուր ապահովագրության ծրագրով:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության նախարարությանը, ապա պետբյուջեի նոր նախագծում ֆինանսավորումը կազմում է 263,5 միլիոն լարի, ինչը 26,5 միլիոնով քիչ է, քան նախատեսված էր նախնական նախագծում:

Ֆինանսների նախարարությունը դա պայմանավորում է նրանով, որ ընթացիկ տարվա ֆինանսավորումից տնտեսվել է մոտ 500 միլիոն լարի:

2014 թվականի պետբյուջեի ճշգրտված նախագծով այն կազմել է 9 080,0 միլիոն լարի:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

ՔԱՌՈՐԴ ԴԱՐ՝ ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

1988 թվականի դեկտեմբերի 7-ին, տեղական ժամանակով ժամը 11-ն անց 41 րոպեին Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, որը պատմության մեջ մտավ Սպիտակի երկրաշարժ անունով:

Ուժգնությունը էպիկենտրոնում գնահատվել է 10 բալ: Երկրաշարժն ընդգրկեց Հայաստանի տարածքի մոտ 40%-ը, ուր ապրում էր 1մլն մարդ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել է 8 բալ եւ ավելին, ընդգրկել է երեք հազար քառ. կմ տարածություն: Տուժել են 21 քաղաք եւ շրջան, 342 գյուղ: Անօթեւան են մնացել 514 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել մոտ 20000 մարդ, որոնցից հոսպիտալացվել են 12500 մարդ, զոհերի թիվը կազմել է 25000 մարդ: Ավերվել էր Հայաստանի ամբողջ բնակֆոնդի 17%-ը, շուրջ 8 մլն քառ. մ բնակելի տարածություն:

Ուղիղ նյութական կորուստների արժեքը կազմել է 10 միլիարդ ԱՄՆ դոլար:

Երկրաշարժի առաջին ժամերից արդեն իսկ համաշխարհային հանրությունը բազմակողմանի օգնություն ցուցաբերեց Հայաստանին: Տուժված երկրամասերին առաջինը օգնության հասավ Վրաստանը: Հարյուրավոր վրացի փրկարարներ, վիրահայության ներկայացուցիչներ անհապաղ ձեռնամուխ եղան փրկարար աշխատանքներին:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿՄԱՏՈՒՑՎԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 7-ին, ժամը 12-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ, Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ, կմատուցվի հոգեհանգստի արարողություն՝ նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակին:

Երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստի արարողություններ կմատուցվեն նաեւ Վրաստանի հայկական բոլոր եկեղեցիներում:

ԱՅՑ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՍԵՅՄԻ ՓՈԽՄԱՐԾԱԼԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Երկօրյա աշխատանքային այցով Թբիլիսիում է գտնվում Լեհաստանի Սեյմի մարշալի տեղակալ Ցեզար Գրաբարչիկը: Այցի շրջանակներում նա հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ: Հանդիպումներում քննարկվեցին Վրաստանի եւ Լեհաստանի միջեւ հարաբերությունները, դրանց խորացման ուղղությունները, ինչպես նաեւ՝ Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հեռանկարները: Քննարկվեցին նաեւ Վրաստանի նախագահի Լեհաստան կատարելիք այցի հետ առնչվող հարցեր:

ՕՐԵՆՍԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ՀՈԳԱԼՈՒ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

Երկրի խորհրդարանում ներկայացնելով կառավարության գործունեության ծրագիրը, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, անդրադառնալով պետական լեզվի օրենքի հարցին, հայտարարեց. «Արտակարգ միջոցներ են ձեռնարկվում վրաց լեզվի՝ որպես պետական լեզվի պաշտպանության ուղղությամբ: Պետական լեզվի մասին հոգալու է պետությունը, որպեսզի երաշխավորված պաշտպանվի վրաց լեզվի սահմանադրական կարգավիճակը: Արդեն մշակվել եւ մոտ ժամանակներում կկիրարկվի նաեւ պետական լեզվի մասին օրենքը»,- ընդգծեց վարչապետը:

Մոտ ժամանակներում Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ կլինի պետական լեզվի մասին օրինանախագծի քննարկմանը: Այդ մասին հայտարարեց կրթության, գիտության եւ մշակույթի խորհրդարանական կոմիտեի փոխնախագահ Նուկրի Քանթարիան:

«Օրինանախագիծն արդեն պատրաստ է: Այն մշակել է Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիան եւ մոտ ժամանակներում այն կքննարկվի խորհրդարանի կրթության, գիտության եւ մշակույթի կոմիտեում»,- ասաց Քանթարիան: Նրա խոսքերով, վերոնշյալ օրինանախագիծը նախատեսում է պետական լեզվի պաշտպանություն եւ աջակցություն:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՎՐՈՊԱՅԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ԿԱՊԱՀՈՎԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պարադիգմը նրանումն է, որ Եվրոպայի ընդլայնումը եւ մեծացումը առավել անվտանգ կդարձնի ողջ աշխարհը, տարածաշրջանը եւ ավելի շատ անվտանգ կլինի մեր ռուս հարեւանը: Վրաստանն անկախ պետություն է իր քաղաքականությամբ: Վրաստանը փորձում է իր բոլոր հարեւաններին, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությանը համոզել նրանում, որ քաղաքակիրթ, տնտեսապես ուժեղ ժողովրդավարական, եվրոպական Վրաստանը եւ եվրատլանտյան Վրաստանը ոչ մեկի համար սպառնալիք չէ: Ընդհակառակը, դա նշանակում է, առավել կայուն սահմաններ, առավել կայուն հարեւանություն»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱՏՕ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեր այս միտումը հենված է Վրաստանի բնակչության ցանկության վրա: Մեր մարդիկ ցանկանում են, որպեսզի Վրաստանը դառնա Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի լիիրավ անդամ»,- հայտարարեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ «Եվրամիությանն անդամակցությունը դա սոսկ քմահաճույք չէ»: «Ես կբացատրեմ, թե մեզ ինչու է անհրաժեշտ Եվրամիությունը: Եթե նայենք մեր Վրաստանի պատմությանը, ապա կտեսնենք, որ մեր նախնիները միշտ ձգտել են Եվրոպայի, եվրոպական քաղաքակրթության կողմը: Մենք ուղղակի շարունակում ենք մեր նախնիների գործը: Մեզ եվրոպական արժեքները շատ մոտ են»,- ընդգծեց նա:

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ ՉԷ»

Վրաստանը ցանկանում է, որպեսզի Եվրամիությանն իր ինտեգրումը, մասնավորապես՝ ասոցիացման պայմանագրի ստորագրումը չարգելակի Ռուսաստանի հետ առեւտրական հարաբերություններին:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:

«Շատ կարեւոր է, որ այս երկու վեկտորները (համագործակցությունը Ռուսաստանի եւ Եվրամիության հետ) չբացառեն միմյանց: Մեզ համար այն առեւտրական հարաբերությունները, որոնք Ռուսաստանի հետ վերականգնվել են ընտրություններից հետո, կարեւոր նշանակություն ունեն: Մեզ համար կարեւոր նշանակություն ունի նաեւ Ռուսաստանի հետ մշակութային հարաբերությունների վերականգնումը: Մեր ընկալմամբ, դա հանգեցնում է այն երկարաժամկետ, քաղաքական սուր հիմնախնդիրների կարգավորմանը, որոնք գոյություն ունեն Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ: Մեր ընկալմամբ, ասոցիացման եւ ազատ առեւտրի մասին պայմանագրերը չպետք է ընկալվեն որպես Ռուսաստանի հետ առեւտրական հարաբերությունների այլընտրանք»,- ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նախարարի խոսքերով, եվրաինտեգրումը դա երկրի ժողովրդի պահանջն է: «Մենք գտնում ենք, որ դա Ռուսաստանը պետք է հարգի»,- ընդգծեց նախարարը: Վրաստանի էկոնոմիկայի նախարարի հայտարարությամբ, ցավալի կլինի, եթե Ռուսաստանը վերականգնի վրացական արտադրանքի արգելքը: Եթե դա անգամ տեղի ունենա, ապա աննշան ազդեցություն կգործի Վրաստանի էկոնոմիկայի վրա: «Մենք ցանկանում ենք կարգավորել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Բնականաբար, քաղաքական ճնշման հավանականություն ը բացառված չէ: Նման փաստեր եղել են եւ վրացական շուկան բացառություն չի եղել: Մեր արտադրանքի վրա արգելք է դրված: Ցավալի կլինի, եթե Ռուսաստանը դա կրկնի: Հուսով եմ, որ դա տեղի չի ունենա, թեպետ, եթե դա անխուսափելի լինի, ապա մեր շուկան առավելագույնս դիվերսիֆիկացված է եւ գտնում եմ, որ դա աննշան անդրադարձ կունենա մեր էկոնոմիկայի վրա: Մեզ մոտ մեծ է Եվրամիության առաջընթացին հետեւելու ցանկությունը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ՈՉ ԹԵ ԿԽՍՏԱՑՆԻ, ԱՅԼ ԿԿԱՐԳԱՎՈՐԻ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն հայտարարեց, որ Վրաստանը ոչ թե կխստացնի, այլ առանձին երկրների հետ կկարգավորի այցեգրային կարգը, ինչը հանդիսանում է Եվրամիության պահանջներից մեկը:

«Մենք մշակում ենք արտագաղթի քաղաքականությունը եւ կատարում պարտավորությունը, որն ստանձնել ենք Եվրամիության առաջ, Եվրամիության երկրների հետ այցեգրային կարգի ազատականացման ուղղությամբ գործողության ծրագրի շրջանակներում: Դա այցեգրային կարգի կարգավորում է եւ ոչ թե խստացում: Վրաստանը 120 երկրի հետ հաստատել է միակողմանի անայցեգրային կարգ: Ուստի առանձին երկրների հետ կարգավորման շրջանակներում կարող է վերականգնվել այցեգրային կարգը, թեպետ դա կարգի խստացում չի նշանակում»,- հայտարարեց Մայա Փանջիկիձեն: Ինչպես նշեց արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը, այդ երկրների ցուցակը դեռ չի ճշգրտվել, եւ այդ ուղղությամբ աշխատանքը շարունակվում է:

ԲԻԶՆԵՍ

ԴԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՇԻՆԱՐԱՐ-ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Դավիթ Նարմանիան հանդիպում ունեցավ երկրի շինարար-գործարարների հետ եւ ներկայացրեց 2014 թվականի համար ծրագրված նախագծերը:

«Մեր նախարարությունը շինարարությամբ զբաղվող եւ հետաքրքրվող ընկերություններին ներկայացնում է այն նախագծերը, որոնք իրականացվելու են հաջորդ տարի: Կարեւոր նշանակություն ունի, որ հենց սկզբից գործարար շրջանի ներկայացուցիչներին տրվի տեղեկատվություն, որպեսզի նրանք կարողանան պատրաստվել եւ, երբ կհայտարարվի համապատասխան մրցույթը, մասնակցել դրան: Նշանակալի է, որ, անցյալ տարվա համեմատությամբ, ներկայիս բյուջեն չի կրճատվում, եւ մենք կկարողանանք իրականացնել մասշտաբային շատ նախագծեր: Մենք գործարարներին ներկայացրինք ոչ միայն մրցույթները, այլեւ տարածաշրջանային նախագծերի ֆոնդը, որով տարածաշրջաններում իրականացնելու ենք ավելի քան 200 միլիոնի նախագծեր»,- հայտարարեց Նարմանիան:

Իր հերթին, Վրաստանի առեւտրաարդյունաբերական պալատի փոխնախագահ Կախի Կոխրեիձեն հայտարարեց, որ իշխանության եւ բիզնեսի միջեւ նորմալ հարաբերություններ են: «Մեր պալատը նպաստում է հանրային եւ մասնավոր հատվածների միջեւ երկխոսությանը: Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությունը նշանակալի դեր է խաղում երկրի զարգացման գործում: 2014 թվականի բյուջեում ենթակառույցային նախագծերի համար հատկացված է 1 միլիարդ լարի: Գործարար շրջանների ներկայացուցիչների հետ կքննարկվեն ապագայի ծրագրերը, միաժամանակ հանրագումարում ենք 2013 թվականի արդյունքները, նշում հիմնախնդիրները: 2013 թվականի սկզբից շատ նախագծեր իրականացվեցին, եւ դրանք կշարունակվեն: Իշխանափոխությունը ուղեկցվում է քաղաքական որոշակի փոփոխություններով: Բացարձակապես փոխվել է վերաբերմունքը բիզնեսի նկատմամբ: Այն դարձել է բացարձակապես առողջ, առանձնապես փոքր եւ միջին գործարարության համար: Եվ ամենակարեւորը, գործարարության մեջ պահպանվում է իրավահավասարության սկզբունքը»,- հայտարարեց Կախի Կոխրեիձեն:

ԲՅՈՒՋԵՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ

Ներկա դրությամբ, 2014 թվականի պետական բյուջեն չի նախատեսում փոխհատուցում այն գործարարներին, ում գույքը նախորդ իշխանության օրոք բռնագրավվել էր: Այդ մասին հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին:

Նրա պարզաբանմամբ, դրա պատճառն այն է, որ, ներկա դրությամբ, այդ հարցով քաղաքական ոչ մի որոշում չի ընդունվել: Թեմայի քննարկումը շարունակվում է:

«Մենք անգամ չգիտենք, թե ինչի մասին է խոսքը կամ որտեղ է գտնվում բռնագրավված գույքը: Այդ ամենը պետք է մանրամասն ուսումնասիրել: Ուստի 2014 թվականի բյուջեում, ներկա դրությամբ, գործարարներին, ում գույքը բռնագրավվել է, փոխհատուցում չի նախատեսվում»,- ընդգծեց Նոդար Խադուրին: Ֆինանսների նախարարն անդրադարձավ նաեւ սպառողական գների կատարման հարցին: Նրա խոսքերով, Ամանորի նախօրեին՝ սպառողական ապրանքների եւ մյուս մթերքների գների ավելացում չի սպասվում:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻՆ ՉԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Վրաստանում իրավապահների պահանջներին չենթարկվելու դեպքում տուգանքը հնգապատկվել է եւ 400 լարիից հասցվել 2000 լարիի:

Մասնավորապես, իրավապահ կառույցների աշխատակցին բառացի վիրավորանքի համար նախատեսված է 2000 լարիի տուգանք կամ 15-օրյա վարչական ձերբակալություն:

Վրաստանի ներքին գործերի նախարարության կողմից մշակված «Վարչական իրավախախտումների օրենսգրքի» փոփոխությունների նախագիծը երրորդ ընթերցմամբ արդեն հաստատվել է խորհրդարանի կողմից:

Այսօրվա դրությամբ, գործող պատժամիջոցները հետեւյալն են. 400 լարիի տուգանք կամ ուղղիչ աշխատանքներ մեկից վեց ամսվա ժամկետով, աշխատավարձի 20 տոկոսի առգրավումով: Եթե հաշվի առնելով չգործի էությունը եւ իրավախախտողի անձը, վերոնշյալ պատժամիջոցների կիրարկումը համարվի անբավարար, ապա նախատեսվում է վարչական ձերբակալություն մինչեւ 90 օրվա ժամկետով:

Իսկ խորհրդարանի կողմից ընդունված նոր օրենքի համաձայն, ծառայական պարտականությունների կատարման ժամանակ իրավապահ (ոստիկանների) զինծառայողների, պետական պահպանության հատուկ ծառայության աշխատակիցների կարգադրություններին կամ պահանջին չենթարկվելու, նաեւ՝ նրանց բառացի վիրավորանք հասցնելու կամ վիրավորական գործողություններ կատարելու դեպքում, սահմանված տուգանքի չափը հասցվել է 2 հազար լարիի, իսկ վարչական ձերբակալության ժամկետը՝ մինչեւ 15 օր:

Միաժամանակ, վերոնշյալ իրավախախտումը կատարող անձինք, մինչեւ երեք տարի ժամկետով զրկվում են հրազեն կրելու իրավունքից:

ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ԱԼԿՈՀՈԼԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Վրաստանի քրեական դատավարական օրենսգրքում (ՔԴՕ) կատարվում են փոփոխություններ, ըստ որի՝ ծնողները կամ ցանկացած անձ, որը նկատվել է անչափահասին ալկոհոլին սովորեցնելու մեջ, կտուգանվի 300 լարիով:

Այս պատժամիջոցը նախատեսված է Վրաստանի ՔԴՕ-ի 170-րդ հոդվածով:

Օրենսգրքում կատարված փոփոխությունները նախատեսում են նաեւ ալկոհոլային խմիչքների ապօրինի առեւտրի պատժամիջոցների խստացում: Մասնավորապես, ալկոհոլային խմիչքների առեւտրի կանոնների խախտման դեպքում, սահմանված է 200 լարիի տուգանք: Առեւտրական օբյեկտում մատչելի տեղում անչափահասներին ալկոհոլային խմիչքների արգելման մասին հայտարարության բացակայությունը հանգեցնում է 100 լարի տուգանքի, իսկ իրավախախտման կրկնության դեպքում՝ 300 լարի:

Անչափահասին ալկոհոլային խմիչքի վաճառքի դեպքում առեւտրական օբյեկտը առաջին անգամ տուգանվում է 500 լարիով, իսկ կրկնության դեպքում՝ 1000 լարիով: